ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, եւ Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն եւ դպրաց, եւ դատապարտեսցեն զնա ի մահ, եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել եւ հարկանել եւ ի խաչ հանել, եւ յերիր աւուր յարիցէ»:

/ՄԱՏԹ. Ի 18-19/

Ինչպես միշտ, այս անգամ ևս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս, առանձնակի շուքով իմաստավորեց մեր մարդացյալ և մարմնացյալ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին յոթ օրերը խորհրդանշող շաբաթը, որ Ավագ է կոչվում՝ անդրադառնալով Երկնաոաք Վարդապետի ուսուցումներին, չարչարանքներին, մահվանն ու հրաշափառ հարությանը:

Ավագ Շաբաթից առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ինչպես նաև Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում տոնախմբվեց Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

«Օրհնութիւն Որդւոյ Դաւթի,
Օրհնեալ որ գայ յանուն Տեառն.
Օրհնութիւն ի բարձունս»:

/ՄԱՏԹ. ԻԱ 9/

Եբրայեցի ժողովուրդը բերկրանքի այս կանչերով և ուրախության աղաղակներով դիմավորեց Երուսաղեմ մտած Տիրոջը՝ ձեռքներին, որպես խաղաղության և հաղթության խորհրդանիշ, ձիթենու ոստեր ու ճյուղեր բռնած, Նրա անձի մեջ տեսնելով Աստծուց խոստացված և երկար դարեր սպասված Մեսիային, Ազատարարին ու Փրկչին:

Խոստացված Մեսիային ընդառաջ գնացող բազմության շրթներից հնչող օրհնաբեր այս խոսքերը մարտի 23-ի կիրակի օրը մեկ անգամ ևս հաղթականորեն հնչեցին Հայաստանյայց Եկեղեցում՝ արձագանքվելով հավատավոր ժողովրդի հոգիներում: Ծաղկազարդի Սուրբ Պատարագ էր մատուցվում հայոց եկեղեցիներում, ինչպես նաև Մայր Տաճարում:

Ճիշտ այնպես, ինչպես դարեր առաջ Երուսաղեմում էր թափորը մեծ շուքով և ցնծությամբ առաջնորդում իր Ազատարարին ու Փրկչին դեպի Երուսաղեմի փառքը հանդիսացող Սողոմոնյան Տաճար, որ նաև Հին Ուխտի ժողովրդի հավատքի միջնաբերդն էր, այնպես էլ հանդիսավոր թափորը դեպի Մայր Տաճար՝ մեր հոգիների Երուսաղեմ էր առաջնորդում Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

Ծաղկազարդի Սուրբ և անմահ Պատարագն սկսվեց առավոտյան ժամը 10.30-ին: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Հավարտ Ս. Պատարագի ներկա հավատացյալներին բաժանվեցին օրհնված ճյուղեր՝ ի հիշատակ երուսաղեմյան տոնախմբության:

***

ԴՌՆԲԱՅԵՔ

«Զողորմութեան Քո զդուռն
բաց մեզ Տէր...»
/Շարակնոց/

Նույն օրը, երեկոյան, դարձյալ մարդաշատ էր Մայր Տաճարը: Հայ ժողովրդի հավատավոր զավակունք եկել էին մասնակցելու *Դռնբացեքի* գեղեցիկ ու հոգեպարար արարողությանը, որ սկսվեց ժամը 17.00-ին:

Սուրբգրային ընթերցվածներից հետո Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Տ. Բագրատ աբեղա Գալստյանը և Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանը Ավագ Խորանի վրա ծնրադիր երգեցին *«Բաց մեզ Տէր»* տաղը:

«Բաց մեզ Տէր»-ին հետևող փոխասացությունը, որ տեղի էր ունենում փակ Խորանի վարագույրի հետևում, արարողությանը ներկա հավատացյալներին մեկ անգամ ևս հիշեցրեց կատարածի օրը տեղի ունենալիք դատաստանը: Պատկերավոր ու տեսանելի կերպով ներկայացվեց վերջին դատաստանը, որի մասին այնքան հաճախ էր խոսում մեր Տերը՝ Հիսուս:

«Զողորմութեան Քո զդուռն բաց մեզ Տէր» շարականի երգեցողությունից հետո, որով խնդրվում է Տիրոջից արժանի դարձնել Երկնավոր օթևանին և վերջին դատաստանի ժամանակ, ճգնավորների միջնորդությամբ, խնայել Իր արարածներին, բացվեց Խորանի վարագույրը:

Ավետարանի ընթերցմամբ ավարտվեց Դռնբացեքի սրտառուչ և տպավորիչ արարողությունը:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

«Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս
մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի
մարմինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք
որ կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն
Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին
ի մահկանացու մարմինս մեր:
/Բ ԿՈՐՆԹ. Դ 10-11/

Հայաստանյայց Եկեղեցու Տոնացույցի համաձայն, Ավագ է անվանվում Ծաղկազարդին հաջորդող շաբաթը, որն իր լրմանն է հասնում մեր Տիրոջ հրաշափառ Հարությամբ կամ Զատկով: Ավագ է կոչվում նաև այդ շաբաթվա յուրաքանչյուր օրը:

Ավագ Երկուշաբթի օրվանից սկսյալ, Հայոց եկեղեցիներում, առավոտյան և երեկոյան արարողությունների ընթացքում, ընթերցվում են Աստվածորդու երկրավոր կյանքի վերջին շրջանին վերաբերող Ավետարանական հատվածները:

Դառն ու ցավալի հակադրություններով առլեցուն էր Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին հանգրվանը: Երուսաղեմ հաղթական մուտքից մի քանի օր անց, նույն ամբոխը, որ կիրակի օրն Իրեն ձիթենու ճյուղերով և արմավենու ոստերով էր դիմավորել, հագուստներն էր փռել Իր ոտքերի տակ՝ բացականչելով, թե *«Օրհնյալ է Տիրոջ անվամբ եկողը»*, այժմ արդեն խելահեղորեն բղավում էր. *«Ի խաչ հան զդա...»*:

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

«Եվ ամէն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կստանաք»:

/ՄԱՏԹ. ԻԱ 22/

Մարտի 24-ին, Ավագ Երկուշաբթի օրը, Մայր Տաճարում, հընթացս առավոտյան և երեկոյան ժամերգությունների, Սուրբգրային ընթերցվածներով հիշատակվեցին արարչագործությունը, ինչպես նաև անպտուղ թզենին, որ դատապարտվեց մեր Տիրոջից /ՄԱՏԹ. ԻԱ 18-22/: Հիսուս հուսախաբ եղավ՝ իմանալով, որ Ուխտի ժողովուրդը /Իսրայելը/ անհնազանդ է գտնվել: Ճիշտ չորացած թզենու նման, ընտրյալ ժողովուրդը չկատարեց ապաշխարության պտուղներ տալու իր պարտականությունը: Այնուհանդերձ Մարդացյալ Տերը ցույց տվեց, որ հավատը կարող է լեռներ շարժել, հաղթել մահին ու հուսախաբությանը:

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

«Տե՛ր, Տեր, բա՛ց արա:
Նա պատասխան տվեց ու ասաց.
Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում»:

/ՄԱՏԹ. ԻԵ 11-12/

Հայաստանյայց Եկեղեցին Ավագ Երեքշաբթի օրը հիշատակում է իմաստուն և հիմար կույսերին /ՄԱՏԹ. ԻԵ 1-13/: Առավոտյան և երեկոյան ժամերգությունների ընթացքում կարդացված Սուրբգրային հատվածները Մայր Տաճարում ներկա հավատացյալներին մեկ անգամ ևս հիշեցրին այն անժխտելի ճշմարտությունը, թե պետք է միշտ հոգեպես պատրաստ լինել, աղոթել ու սպասել Փեսային՝ Հիսուս Քրիստոսին, միաժամանակ խոնարհությամբ խնդրել Աստծուց, որ ցույց տա մեզ Իր սերը:

ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

«Աղքատներին ամէն ժամ ձեզ հետ ունեք,
բայց ինձ միշտ ձեզ հետ չէք ունենա»:

/ՄԱՏԹ. ԻԶ 11/

Մայր Տաճարում, հընթացս առավոտյան և երեկոյան ժամերգությունների, Սուրբգրային ընթերցվածներով հիշատակվեց մեղավոր կինը, որ օծեց մեր Տիրոջ գլուխը թանկագին յուղով և համբուրեց ոտքերը՝ հակառակ Հուդային, որ մատնեց Նրան հանուն դրամի: Քրիստոս նրա արարքը համարեց գեղեցիկ և ընծայական, զի գիտեր, որ այդ օծումը Իր մահվան նախապատրաստությունն է /ՄԱՏԹ. ԻԶ 6-16/:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

«Առեք, կերեք, այս է իմ մարմինը:
Խմեցէք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի
իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց
մեղքերի թողության համար»:

/ՄԱՏԹ. ԻԶ 28-29/

Ավագ Շաբաթվա օրերի շղթայից յուրօրինակ կերպով է առանձնանում Ավագ Հինգշաբթին, որը նաև հիշատակն է մեր Տիրոջ վերջին ընթրիքի:

Մայր Տաճարը լեփ-լեցուն էր հավատացյալներով: Եկել էին մասնակցելու վերջին Ընթրիքը և Հաղորդության Ս. Խորհրդի հաստատումը խորհրդանշող Սուրբ Պատարագին: Օրվա պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում պատարագիչ Սրբազան Հայրը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի *Հաղորդության* վերաբերյալ ճառը:

Աստվածորդին վերջին ընթրիքի ժամանակ վերցրեց հացը, օրհնեց, գոհացավ, տվեց Իր աշակերտներին՝ ասելով. «*Առե՛ք, կերե՛ք, սա է իմ մարմինը*»: Ապա վերցրեց գինին, օրհնեց, գոհացավ և դարձյալ տվեց աշակերտներին՝ ավելացնելով. «*Առե՛ք, խմե՛ք, սա է իմ արյունը*»: Պատվիրեց նաև, որ այսուհետ, ի հիշատակ այդօրվա, նրանք էլ նույնը կատարեն: Այսպես հաստատվեց Հաղորդության Սուրբ Խորհուրդը, որ հետագայում վերածվեց մերօրյա Ս. Պատարագին՝ խորհրդանշելով նաև Քրիստոսի կենդանի զոհաբերությունը:

Ս. Պատարագին ներկա էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՈՏՆԼՎԱ

«Եթե ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր
ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց
ոտքերը լվանալ. որովհետև մի օրինակ տվի ձեզ...»:

/ՀՈՎՀ. ԺԳ 14-15/

Երեկոյան ժամը 16.30-ին Մայր Տաճարում կատարվեց Սուրբ Եփրեմ Խուրիի կողմից հաստատված և Գրիգոր Վկայասեր Հայրապետի կողմից ԺԲ դարում թարգմանված Ոտնլվայի մեծախորհուրդ կարգը, որը հիշատակն է Տիրոջ տված խոնարհության օրինակի: Սիրո և խոնարհության անկրկնելի դասն այդ օրը ստացան Մայր Տաճարում ներկա մեծաթիվ հավատացյալ հայորդիները:

Վերջին ընթրիքի ժամանակ մեր Տերը, Իր առաքյալներին խոնարհության ամենամեծ դասն ավանդելու համար, լվաց նրանց ոտքերը: Այդ մասին Հովհաննես Ավետարանիչը գրում է. «*Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով, լցրեց կոնքի մեջ և սկսեց լվանալ իր աշակերտների ոտքերը և սրբել մեջքին կապած սրբիչով*» /ՀՈՎՀ. ԺԳ 4-5/:

Ահա այս հիշատակն էր վկայակոչվում Մայր Տաճարում: Ավագ Խորանի բացվելուց հետո, ընթերցվեց օրվա խորհուրդը մեկնող աղոթքը, որում հիշվեց Քրիստոսի մարդեղության խորհուրդը, փրկագործությունը: Ջուրը կոնքի մեջ խաչաձև կաթեցնելուց հետո, ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ, ինչպես նաև Հովհաննես Պլուզ վարդապետի սիրո մասին գրած աղոթքը:

Օրվա հատուկ շարականների երգեցողությունից հետո, ընթերցվեց յուղի և ջրի համար գրված օրհնության աղոթքը, հավարտ որի Ս. Խաչով և Ս. Ավետարանով օրհնվեցին ջուրն ու յուղը: «Պահպանիչ»-ից հետո տոնականորեն զգեստավորված Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը, ծնկելով, ջրով լվաց և յուղով օծեց տասներկու ճեմարանականների և ԵՊՀ-ի Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողների ոտքերը:

Հիսուս Իր աշակերտների ոտքերը լվաց միայն ջրով: Այսօր նաև յուղով օծելը խորհրդանշում է այն անուշաբույր յուղը, որ մեր Տիրոջ ոտքերին թափեց մեղավոր կինը:

Լվացման արարողությունից հետո կարդացվեց Ս. Ավետարանը, ուր հիշատակվեց Քրիստոսի ձեռքով կատարված լվացումը:

Ապա ներկաներին խոնարհության անկրկնելի դասը մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վերջում ներկա հավատացյալներին բաժանվեց օրհնված յուղը՝ տուն տանելու համար:

ԽԱՎԱՐՈՒՄ

«Մարդու Որդին կգնա այս աշխարհից,
ինչպես նրա մասին գրված է, բայց վա՜յ
այն մարդուն, ում ձեռքով կմատնվի...»:

/ՄԱՏԹ. ԻԶ 24/

Երեկոյան, հավարտ ժամերգության, Մայր Տաճարում կատարվեց հսկում՝ ի հիշատակ մարդացյալ Աստվածորդու երկրավոր կյանքի վերջին անհուն գիշերվա: Այս արարողությունը կոչվում է «*Խավարում*»: Ներկա հավատացյալ հայորդիներն անափ տխրությամբ էին եկել մասնակցելու այս ամենատխուր արարողությանը: Ջերբակալությունից առաջ մարմնացյալ Տերը աղոթեց Գեթսեմանիի պարտեզում, դիմագրավեց մահվան տագնապը:

Ավագ Խորանի վրա լուցյալ տասնմեկ մոմերը խորհրդանշում էին Տիրոջ առաքյալներին, սև գույնով ներկվածը՝ Հուդային, Մեջտեղում վառվող ամենամեծ մոմը՝ Հիսուս Քրիստոսին: Արարողության ընթացքում երգվեցին վեց ողբալի երգեր, որոնցից յուրաքանչյուրին հետևեցին Ավետարանական ընթերցվածները, որ բովանդակում էին Հիսուսի՝ Գեթսեմանիի պարտեզում աղոթելը, Հուդայի գալը, համբույրի միջոցով մատնելը, Հիսուսին ամբոխի ձեռքը հանձնելը, Աննայի ու Կայիափայի մոտ տարվելը, ծեծվելը, ապտակվելն ու անարգվելը, Պետրոսի երեք անգամ ուրանալն ու զղջալը: Ավետարանական յուրաքանչյուր ընթերցվածից հետո զույգ առ զույգ մարվեցին մոմերը:

«Տէր յերկնից» շարականից հետո հանգցվեցին եկեղեցու բոլոր լույսերը, և հնչեց «Փառք ի բարձունս»-ը: Աստվածաշնչյան ընթերցումներից, հոգեպարար շարականների և սաղմոսների երգեցողությունից հետո, հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Միքայել Ծ. վարդապետ Աջապահյանը՝ առանձնակի մանրամասնելով խաչելության խորհուրդը:

«Ծագեա»-ի երգեցողության ժամանակ կրկին վառվեցին լույսերը, դուրս բերվեց նաև մեջտեղի մեծ մոմը: Արարողության ավարտին երգվեց «Խաչի քո Քրիստոս»-ը և կատարվեց խնկարկություն:

Ամբողջությամբ սևով ծածկված սեղանի վրա դրված մոմերը, որ հերթով հանգցվեցին, խորհրդանշում էին աշակերտների թողնել-փախչելը, իսկ մեջտեղի մոմը Տիրոջ խորհրդանիշն էր և ցույց էր տալիս Նրա մենակ ու անօգնական մնալը:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ

«Այն օրը չափազանց մեծ սուգ պիտի լինի
Երուսաղեմում, ինչպես դաշտում կտրտված
նոնենիների վրա եղած սուգը: Պիտի
հեկեկա երկիրը՝ ամեն մի ազգատոհմ՝ առանձին...»:

/ԶԱՔ. ԺԲ 11-12/

Ավագ Ուրբաթ. ամենահանդիսավոր և տխուր օրը քրիստոնյաների համար, զի հիշատակն է Քրիստոսի խաչից իջեցվելուն: Առավոտյան ժամը 11.00-ին Մայր Տաճարում, համաձայն տոնացույցի, կատարվեց Հիսուսի խաչելության կարգը:

Ընթերցված Ավետարանները բովանդակում էին Քրիստոսի՝ Պիղատոսի մոտ տարվելը, մահվան վճիռը, Գողգոթայում խաչվելը, արեգակի խավարումը, երկրագնդի մթնելը և խաչի վրա մարդացյալ Տիրոջ մահը:

Ավագ Ուրբաթ օրը Հայաստանյայց եկեղեցիներում Ս. Պատարագ չի մատուցվում, որովհետև այդ օրը Քրիստոս Ինքը, որպես կենդանի զոհ, պատարագվեց խաչի վրա:

Ավագ Ուրբաթ օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում տեղի ունեցած արարողությունը խորհրդանշում էր Քրիստոսի թաղումը: Խորհրդանշական կերպով պատրաստված Հիսուսի գերեզմանի առջև, ծնկի եկած, երգվեց «Սուրբ Աստված»-ն առանց փառավորյալի, կարդացվեց Ս. Ավետարան: «Լույս զվարթ»-ի երգեցողությունից հետո կատարվեց նախատոնակ: Այնուհետև, հավարտ «Պարգևատուն» շարականի երգեցողության, թափորով կատարվեց խնկարկություն: «Եկայք հաւատացեալք» շարականի երգեցողությամբ թափորը պտտվեց Մայր Տաճարի շուրջը և, որպես հիշատակ Քրիստոսի թաղման, վերջում երգվեց «Խաչի քո Քրիստոս»-ը:

Արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

«Եվ նրանք գնացին գերեզմանի ապահովությանը հոգ տանելու և վեմը կնքեցին՝ զինվորներ նշանակելով»:

/ՄԱՏԹ. ԻԷ 66/

Մայրավանքում Ս. Զատկի Ճրագալույց էր: Երեկոյան ժամը 17.00-ին Մայր Տաճարում սկսվեցին երեկոյան ժամերգությունն ու Սուրբգրային 12 ընթերցվածները, ի շարս որոնց նաև՝ Դանիելի թուղթը: Ապա մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագը: Օրվա Պատարագիչն ու քարոզիչն էր Տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը:

Զատկի Ճրագալույցի երեկոյան է ավարտվում նաև Մեծ Պահքը, որ, ըստ հնավանդ սովորության, լուծվում է ձկով, ձվով և յուղով:

Ս. Պատարագից հետո կատարվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության նախատոնակը: Ապա ներկա հավատացյալները շտապեցին տուն՝ ընտանիքներում միասնաբար, համաձայն նախնյաց սովորույթի, հավաքվելու տոնականորեն պատրաստված սեղանի շուրջ և ընթրելով՝ լուծելու Մեծ Պահքը:

ԶԱՏԻԿ: ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

«Իսկ եթե մեռելները հարություն չեն առնում, ապա Քրիստոս էլ հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է ձեր հավատը»:

/Ա ԿՈՐՆԹ. 16-17/

Կիրակի, 30-ը մարտի: Ցնծություն ու բերկրանք էր ապրում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, քանզի Տիրոջ հրաշափառ Հարությամբ հաղթվեց մահը, և այդ հաղթանակը եղավ մարդկության պատմության մեծագույն նվաճումը:

Մարդացյալ Տերն Իր տնօրինական առաքելության ընթացքում ուսուցանեց հարության անժխտելի ճշմարտությունը, այլ խոսքով ասած՝ սիրով, զոհողությամբ, նեղությամբ, տառապանքով ու հալածանքով առլեցուն կյանքը քարոզեց, որի փառապսակը եղավ Իր հրաշափառ Հարությունը:

Սուրբ Հարության խորախորհուրդ ու անմեկնելի ավետիսը մեկ անգամ ևս վերիմաստավորելու, վերակենսավորելու և վերապրելու ակնկալությամբ էին հայ հավատավորները, խուռներամ բազմությամբ Մայր Տաճար եկել՝ մասնակցելու Զատկական Սուրբ Պատարագին: Օրվա պատարագիչն էր Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը:

Ս. Պատարագի ընթացքում ներկա հավատացյալներին օրվա խորհուրդը մեկնող քարոզ խոսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Զատկական Ս. Պատրագին ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մովսիսյանը, Գիտության և Կրթության նախարար Արտաշես Պետրոսյանը, Աշխատանքի և սոցապ նախարար Հրանուշ Հակոբյանը, Կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Կրոնից գործոց խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, Արմավիրի մարզպետ Սեդրակ Հարությունյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն, ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Պիտեր Թոմսոնը, Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիֆֆար Էսֆահանին, Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յան Կեժունը, Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիուսը, Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ահսադ Ֆուադ Ռասլանը, ՄԱԿ-ի ներկայացուցիչ տիկին Կեբեդեն, միջազգային, բարեսիրական կազմակերպությունների, ֆույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, թեմական առաջնորդներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Սուրբ Պատարագից հետո Վեհարանի ընդունելությունների սրահում տրվեց պաշտոնական ճաշ:

***

Այո՛, հարյավ մեր Տերը: Այդ Հարության Ս. Պատարագով հավատավոր հայորդին մեկ անգամ ևս ճշմարտապես ընկալեց ու զգաց, որ Քրիստոսի Հրաշափառ Հարության երջանկաբեր ավետիսով է ողջերին փոխանցվում բոլոր մեռյալների հարության հույսը: Օրվա խորհուրդն ու իմաստը մեկնող շարականի բառերով իսկ ասած՝ «*Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբը իւրով մեզ զկեանս պարգեւեաց*»:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ